



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material




17569-

17573

370.1

F-34



84

ԱՆՏԱՌԱՑ ՄԱՏՈՒՌԸ



Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ե Ա Ց

Ի Գ Ա Ղ Ղ Ի Ա Կ Ա Ն Է

ԱՏՈՄ Յ . ՏԷՐՈՅԵՆՑ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆ Ի . Յ . ՏԷՐՈՅԵՆՑ

ԱՇԸՐ ԷՖԷՆՏԻ ԽԱՆՆ . ԹԻՒ 8 .

1860



ԱՆՏԱՌԱՅ ԻՐԱՏՈՒՌԸ



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

8671

2276

40



## ԵՆՏՈՒԷՅ ԾԱՏՈՒՈՒՐ

Քոնրատ Էրլիպը մէկ երիտասարդ և ազ-  
ւոր տղայ մըն էր որ պղնձագործութեան  
մէջ ազէկ աշկերտութիւն ըրած էր, և երեք  
տարիէ 'ի վեր օտար երկիրներ կը պտըտէր իր  
արհեստին մէջ կատարելագործելու համար:  
Մագուր հագուած, կռնակը ծանր պարկ մը  
և ձեծքը ոստախիտ փայտ մը ունենալով ա-  
մառուան տաք օր մը խիտ անտառէ մը  
կանցնէր, և քիչ մը ժամանակ առաջ երթա-  
լէն ետքը ճամբան կորսնցուց: Գուցէ եր-  
կու ժամէն 'ի վեր անտառին մէջ կը թափա-  
ռէր առանց իր ճամբան գտնելու, և իր շուա-  
րումը քչիկ քչիկ կ'էկնար: Արեգակը իջ-  
նալ կ'սկսէր, և իր վերջին շառաւիղներուն  
աղօտ լուսովը, մէկ պզտիկ մատուռի մը զան-  
գակատան գլուխը նշմարեց որ մայր ծառե-  
րուն սևագոյն դագաթներէն վեր կը բարձ-  
րանար: Ճամբան այն կողմը դարցուց, և  
շուտ մը ռոնակոխ ճանապարհի մը մէջ գըտ-  
նուեցաւ որ անտառին կեդրոնը բլուրի մը  
վրայ մինակ կառուցած փոքր մատուռի մը  
կ'առաջնորդէր:

Իր երթալէն առաջ, հայրը իրեն այս խրատը տուած էր. «տղաս, երբ որ ժամանակդ և պարագաները քեզի կը ներեն, առանց ներս մտնելու եկեղեցիի մը առջևէ մ'անցնիր, վասն զի այս սուրբ շինուածները կառուցած են որ Արարիչը հոն երկիր պագանեն, և անոր զանգակառունը երկինք ցուցընող մատի մը կը համեմատի, որէ մարդոց ճշմարիտ հայրենիքը: Ի՞նչպէս կրնաս Թողտալ որ, քու սիրտդ դէպ 'ի երկինք վերցընելու, և քեզ քու Արարչիդ առաջը խոնարհեցընելու առիթը անցնի: Դուն հոն քանի մը նկար պիտի տեսնաս որ սիրտդ պիտի ուրախացընէ, կամ հոն քանի մը հանճարեղ բաներ պիտի կարդաս որ քաջութիւնդ և բարեպաշտութիւնդ պիտի հաստատէ, և աղէկ ճամբու մէջ քալելդ շարունակելու քեզ պիտի ամրացընէ»:

Քոնրատ, որ հօրը խրատին յիշատակը կորսընցուցած չ'էր, մատուռը մտաւ: Կամարը մուտ էր, պատերը մուտ մոխրագոյն, պատուհանները բարձր, նեղ և պզտիկ կլոր ապակիներ ունէր, և այս տեղոյս մէջ շատ մը հնութեան նշաններ կար, և խոր լռութիւն մը որ այս տեղոյս մէջ կը տիրէր ազօթելու հրաւիրեց զինքը: Դռանը քով ծունկի վրայ եկաւ և ջերմեռանդ ազօթք մը ըրաւ: Եւ

պարկը չառած, լսորասրն մօտեցաւ պատկեր-  
ները նկատելու համար: Յանկարծ սեղանին  
առաջը աթոռի մը վրայ կարմիր այծենիի  
մաշկէ կողքով սսկեզօծ աղօթքի փոքր գիրք մը  
նըշմարեց: Բացաւ և առաջին թերթին վրայ իր  
ձեռքովը իր անուէնը գրուած տեսնելով, ապ-  
շեցաւ մնաց: Երազել կը կարծեր և իր աչ-  
քին հաւատալու կը կասկածեր:

Գիրքը զննեց, և քանի մը տեղ հոս հոն  
կարդաց և երբեմն գոց ըրած ըլլալը յիշեց:  
“Այո՛, ըսաւ ինքն իրեն, այս գիրքը իմս է,  
կարդացած անուէնս իմ գիրս է: Տակաւին  
դպրոց դացած ատենս անանկ կը գրէի: Բայց  
չեմ կրնար իմանալ թէ այս գիրքը ինչպէս  
կ'ըլլայ որ ճշգիւ այս առանձին մատուռին  
մէջ կը գտնեմ:”

Իր տղայու թենէն հազար ու մէկ բան  
կու գար միտքը: Սիրտին մէջ իրենները  
տեսնելու սաստիկ փափագ մը զգաց, և աչ-  
քերէն քանի մը ջերմ արտասուք թափե-  
ցան: Ծնկան վրայ եկաւ և գոչեց. “Տէ՛ր  
իմ, շնորհակալ եմ ինձի աղէկ ծնողք տա-  
լուդ, ինչ բաղդաւոր օրեր անցուցեր եմ իմ  
ընտանեացս մէջ: Ինչ երջանիկ էի երբ մեր  
բարի մայրը, իր գործարանին առաջը գործի  
կը նստէր, և իր տղաքը իր բոլորտիքը առնե-  
լով, քու հրաշքներդ կը պատմեր, երբ որ

մեր պատուական հայրը իրիկունը աշխա-  
 տանքէն կսւ գար, և մեզի իր ծնկերուն վրայ  
 կ'առնէր մեզի մեր վիճակին յարմար քանի  
 մը պտտմութիւններ պտտմելու, երբ ես և  
 քոյրս պարտեզին մէջ կը խաղայինք, և դե-  
 ղեցիկ ծաղիկներէ փունջեր կը շինէինք մեր  
 ծնողացը տանելու համար: Մբսո՛ս, պատե-  
 րազմը մեզ մեր հայրենիքէն հալածեց և ի-  
 րարմէ զատեց: Մեր բարի մայրը Թշուառ-  
 ութեան մէջ մեռաւ. շատ գամանակ է որ  
 հող դարձաւ: Ամենեւին հօրմէս լուր մը  
 առած չեմ, գուցէ վիշաբ յափշտակած պիտի  
 ըլլայ, և չգիտեմ իմ խեղճ քոյրս ի՛նչ եղաւ,  
 ես այսօր աշխարհի վրայ մինակ եմ, քենէ  
 ուրիշ չըկայ, Աստուած մեծ, որ իմ ծնո-  
 զացս ի՛նչ պատահելը գիտնայ: Թէ որ հայրս  
 ու քոյրս տակաւին կ'ապրին, քեզի կաղա-  
 չեմ որ մեզ միաւորեւ: Գթա՛ ինձի, տէ՛ր  
 իմ, լսէ՛ մեր հօրը վերջին անգամ տեսնել-  
 նուս ըրած աղօթքը: Մեր հօրը դառն բա-  
 ժանման ատենը ինձի տուած օրհնէնքը կա-  
 տարէ՛ «: Քոնրադ այսպէս աղօթք ընելը  
 երկար ատեն շարունակեց: Երբ աղօթքը  
 լմնցուց, ելաւ ու ինքն իրեն ըսաւ, չիյ-  
 տեմ, Թէ այս գիրքը կրնամ առնել, և ի-  
 մինս եղածի պէս կրնամ համարել: Այս  
 գիրքը հոս ձգողը գիշեր չեղած անշուշտ

բնտուել պիտի գայ : Աւելի աղէկ է որ քանի մը ժամ սպասեմ : Կարելի է որ այս անձէս ինձի պէտք եղած տեղեկութիւնն անկերը կ'առնեմ : »

Մտածութեամբ մատուռին մէկ անկիւնը քաշուած իր գիրքը կարգաւ սկսաւ տակաւին քանի մը երես կարգացած չէր որ պարկէշտ և մագուռ հագուած շուրջ տասն ու վեց տարուան աղջկան մը ներս մտնելը տեսաւ որ խորանին մօտեցաւ, ծըռեցաւ և հառաչելով և ետ նայելով ըսաւ « Հոս չէ. Չիյտեմ ինչ կորսնցնելս աւելի կը սիրէի : « Աղջիկը խորանին առաջը ծուկնկի վրայ եկաւ քանի մը վայրկեան, ջերմեռանդութեամբ աղօթեց և շուտ մը երթալ ուղեց :

Ան ատենը քոնրատ ելաւ և աղջկանը մօտեցաւ, գիրքը ձեռքը բռնելով : Աղջիկը անիկայ տեսած չէր, և տեսածին պէս վախցաւ : քոնրատ քաղցրութեամբ մը անոր ըսաւ. « Օրիորդ, անշուշտ այս գիրքը կորսընցուցեր էք » :

« Այո՛, պարոն, « ըսաւ աղջիկը ուրախութեամբ : « Գիրքին գլուխը քոնրատ էր լիպին անունը գրուած է :

« Ուրեմն ան շատ կը սիրէք, ըսաւ քոնրատ :

“Ո՛հ, այո՛ւ պարո՛ն, շատ, հաւատա՛  
 ինծիս:”

“Համարձակի՞մ արդեօք անոր պատ-  
 ճառը ձեզի հարցընել: Քոնրատ Երլիպի ա-  
 նուէր ինձի անծանօթ չէ՛, և կրնամ ան-  
 շուշտ ձեզի անոր վրայօք լուրեր տալ:”

“Թէ որ իմ հարցմուէքներուս կրնա-  
 յինք պատասխանել, ինձի մեծ բան մը ը-  
 րած կըլայիք: Սյս Քոնրատ Երլիպը ինձի  
 շատ հոգ կուտայ: Քանի մը ճանապար-  
 հորդ ինձի շատ անգամ հաւտացուցած են  
 որ անոր վրայօք բան լսեր են, ոմանք տեղ  
 մը, ոմանք ուրիշ տեղ, բայց մինչև հիմա  
 այս լուրերէն մէկն ալ ճիշդ ելած չէ:”

“Իմ պատմուածիւնս քեզի ընեմ, կը-  
 սէ աղջիկը, և զօւցէ կրնամք իմանալ թէ  
 քու ճանչցած Քոնրատի մի ինձի հոգ տու-  
 ցող: Իմ հայրս Ռէն գետին քովերը գտնը-  
 ուած քաղաքներուն մէջ ժողովրդեան պաշ-  
 տօնատէր էր: Թշնամիին արշաւանքը մեզի  
 մեր հայրենիքը թողուլ տուաւ, իր իշխանը,  
 որ իր երկիրներէն զրկուած էր, անոր բը-  
 նաւ օգնուածիւն չէր կրնար ընել: Իմ հօրս  
 վիճակը շատ վտանգաւոր էր, Մայրս թըշ-  
 ուառուածէն և տառապանքէն մեռաւ,  
 անով շատ ցաւ տուաւ հօրս, որ մենք եր-  
 կու աղայ էինք, եղբայրս և ես, այս փո-

Ինչպէս զհօրս գործ մը գտնելու համար ը-  
 րած ճամբորդութիւնը կարգիւէր: Իմ մօրս  
 մեռած քաղքին բնակիչներէն մէկը, մէկ  
 քաջ եւ հաւատարիմ պղնձագործ մը որ տը-  
 ղայ շուկէր, իմ եղբայրս պահելու յօժա-  
 րեցաւ, հայրս ասոր հաճեցաւ: Երբ եղբօրս  
 վիճակը ապահովցաւ, մենք շատ հեռացանք:  
 Խեղճ հայրս յանկարծ հիւանդացաւ, և աս-  
 նոր վրայ քանի մը օրէն ետքը մեռաւ: Ան  
 ատենը ես վեց տարուան էի, և ըրած կո-  
 րուստներու մեծութիւնը չէի իմանար:  
 Մարդասէր տիկին մը ինձի գթաց և իր քովը  
 առաւ: Ահա տասը տարի է որ հայրս մեռաւ,  
 և այս ժամանակէս ՚ի վեր եղբօրս համար  
 լուր մը չառի: Մեռած օրը, հայրս շատ  
 թախանձանօք իր հիւրընկալին աղաչեց որ  
 իր օրհնութիւնը եղբօրս տայ, և բարերար  
 պղնձագործին աղաչէ որ խեղճ որբին հօր  
 տեղ ըլլայ: Հայրս թակացեալ ձեռքով իմ  
 եղբօրս եղած քաղքին անունը, և եղբայրս  
 քովը առնող մարդասէր անձին անունը,  
 պզտիկ տեւրակի մը վրայ գրեց որ կորսվե-  
 ցաւ: Աղախին մը, որ կարդալ չէր գիտեր,  
 անպիտան բանի մը պէս աղբանոցը նետեր  
 էր: Քանի անգամ իմ խեղճ եղբայրս չ՞երա-  
 գէցի: Արցածնուս չափ հնարք մտածեցինք  
 իր վրայ լուր առնելու, ռայց մեր ջանքերը

պարապը ելան, անկէ մինակ այս պզտիկ գիւղքը մ'նաց ինծի: Թեպէտ և այս գիւղքը իր ձեռքէն չառի, իր անուէնը գրուած է, անոր համար է որ շատ կը սիրեմ, մեր ըզգեսաները գտնուած սնտուկի մը ետևէն գաայ: Երբ որ հայրս եղբօրս ինկած ինչքերը տուաւ, այս գիւղքը մոռցաւ, և ասոր համար է որ այս գիւղքը իմ ձեռքս մ'նաց»:

Քոնրատ որ քանի մը ժամանակէ 'ի վեր գորովելով իր քրոջը վրայ կը նայեր՝ դողդոջիւն ձայնով մը անոր ըսաւ, «օրիորդ, դուք Ղուիզայ կը կոչուիք, այնպէս չէ՞» մի»:

Այո՛, պարոն, պատասխանեց զարմանքով մը աղջիկը, Ղուիզայ էր լիպ»:

Տէ՛ր իմ, շնորհակալ եմ, գոչեց ձեռքերը երկինք վերցընելով, ան է, քոյրս, սիրելի Ղուիզաս, այս տողերը ես եմ գրեր, այս իմ անուէնս է. ես այն Քոնրատ էր լիպն եմ որ դուն շատ կը ցաւիս»:

Ղուիզայ այս պատահմանը վրայ զարմացաւ, և ասանկ հրաշալի կերպով մը իր եղբայրը գտնելուն վրայ ուրախութենէն զգայարանքներուն գործածութիւնը կորսընցուց: Իսկզ՛ Քոնրատին զարմանքը անորինէն պակաս չէր: Երկուքն ալ առանց խօսք մը ընելու քանի մը վայրկեան իրարու երես կը



նայելին , վերջապէս արտասուեաց հեղեղ մը  
Թափելով իրարու գիրկ ինկան :

Երբ որ առաջին ուրախութիւնէն զգաստա-  
ցան և հանդարտութիւնը խռովութեան տեղը  
բռնեց . Քննրատ քրոջը ըսաւ . սիրելիդ իմ  
Նուիրայ , տակաւին ինչպէս զատուեցանք նե-  
միտքս է : Ուրիշ օտարական պարոն մը , հօրս  
պէս , իր հայրենիքը ձգելու պարտաւորած , որ  
իր հետը երկու ալ տղայ ուներ . մինչեւ մօտա-  
ւոր քաղաքը քեզ իր կառքին մէջ առնելու հա-  
ճեցաւ : Կառքին մէջ հօրս նստելու տեղը ը գըտ-  
նուելուն համար , ինք ստքով քալելու ստիպուե-  
ցաւ : Երբ կառքով երթալու խօսք եղաւ նե-  
միտքս է որ ո՛րքան ուրախութիւն ցուցուցիր ,  
խեղճ հայրերնիս քեզ դրկելու եւ կառքին մէջ  
դնելու ատենը ջերմ արտասուօք կուլայի : Գուն  
ան ատենը շատ պզտիկ էիր , և երբ ես քեզ  
կը մտածէի միշտ տղու մը պէս կերեւայիր ին-  
ձի : Այսօր դուն մեծ ես , և կ'երեւի որ կա-  
տարեալ առողջ ես , ամենեւին քեզ պիտի չի  
ճանչնայի : Ո՛հ լսիրելի ուիրայ , իրար դարձեալ  
գտնելնուս համար Աստուծոյ շնորհակալ ըլ-  
լանք : »

« Ափսո՛ս . շորունակեց , մեր իրար գտնալը  
մտածած ատենս սիրտս կուրախանայ , և սա-  
կայն լսելով այն բանը որ լսելէն կը վախնայի Թէ  
մեր խեղճ հայրը մեռեր է , արցունքս չեմ կըս-

նար բռնել : Չ'ես կընար երեւակայել որ քանի որ հայրս ոչ զիս քովը առնող պղնձագործին և ոչ ինձի նամակ չ'եր գրեր , ինչ անհանդատութիւն էր որ զիս կ'ուտեր : Սակայն այս պատուական մարդը ինձի իր արհեստը սովրեցուց , ամենեւին կըշտամբանքներուն չընայելով որ կըսէին թէ բաւական խենդ է եղեր որ զիս իր քովը առեր է : Չե՞ս տեսնար մի , կըսէին անոր , որ իր հայրը քեզ խաբեր է , տղան գտնելու համար և գուցէ տղուն համար եղած ծախքերուն հաշիւը տալու համար ըրած խօսամունքին վրայ չը կեցաւ , այս մէկ չար մարդ մըն է որ իր տղէն ազատել և անիկայ ուրիշի վրայ ձգել կուզէ : Դուն կընաս մտածել թէ այս խօսքերը սիրոս ինչպէս կը ծակէին , թէպէտ ես չէի հաւատար , վասն զի ասանկ ատելի խօսքերուն ինչպէս կընայի հաւատալ , դուն գիտես որ մեր հայրը ինչպէս աղէկ և բարեպաշտ էր : »

« Ափսոս , այո , պատասխանեց Ղուիզայ , ամենեւին չի պիտի մոռնամ ան գիշերը որ ան կորսնցնելու թշուառութիւնը ունեցայ , ինձի արթնցնել տուաւ և իւր մահուան անկողնոյն քով կանչեց : Քեզ ալ զիս ալ օրհնեց , իմ խեղճ Քոնրատտ , որ այն վտեմ վայրկենին մէջ քեզ իր քովը չը տեսնելով շատ կը ցաւէր : Ինչ բարեպաշտութիւն կը փայլէր աչքերուն մէջ , պիտի ըսէին որ ան մէկ սուրբ մըն է , երբէք մեր

վախճանալ հօրը կերպարանքը միտքէս պիտի  
չելլայ . . . »

« Քոնրատ իր քրոջը ըսաւ , իմ սիրելի  
Լուիզաս , այս մատուռիս մէջ մտնելով հայրս  
կը մտածէի : Անիկայ իմ առաջըս տեսնալ կը  
կարծէի , մեր զատուած օրուանը պէս երեսը  
դեղնած և տխուր : Թէպէտ այս ազէտաւոր ժա-  
մանակէս 'ի վեր տարիներ անցած է , իր դէմքը  
միշտ իմ մաքիս մէջ քանդակուած կեցած է որ-  
պէս թէ երեկ բաժնուած ըլլայինք : Օտարա-  
կանին հետ քու երթալուդ միւս օրը , հայրս  
շատ կանուխ ճամբայ ելաւ , մինչեւ մօտի դե-  
ղը հետը բնկերացայ : Եկեղեցւոյ դռնները բաց  
էին , Սուրբ տէրը մտանք , հայրս ան առէնը  
ապսպրեց որ բաց եկեղեցիի մը 'առջեւէ ներս  
չի մտած չ'անցնիմ : Եկեղեցին մտած ատեննիս ,  
ներսը մարդ չը կար : Հայրս ինծի հետ խորանին  
առաջը ծռնկի վրայ եկաւ , և ջերմ արտասուօք  
աղօթելու սկսեց , ես ալ կաղօթէի ու կուլայի :  
Երբ աղօթքը լրացաւ , ելաւ և ինծի ըսաւ .  
« իմ սիրելի Քոնրատս , քեզ և քոյրդ Աստուծոյ  
յանձնեցի , ձեր վրայ ան պիտի հսկէ , ասկէ  
ետքը ձեր հայրը ան պիտի ըլլայ : Աստուած  
միտքերնուդ առաջը ունեցիր և անոր յիշատակը  
միտքդ ամենեւին չելլայ : Ամենեւին մեր փրկ-  
չին պատուերէն , և մանաւանդ ուրիշի մը բնաւ  
չարուծիւն չընելու պատուերէն մի խոտորիդ :

մեռնելու մօտ է, ըսաւ լալով, անշուշտ ասիկայ վերջին անգամն է որ կը տեսնուինք: Թէ որ օր մը պատուով քու ապրուստդ վաստկիս, քրոջդ հող տար: » Խորանին առաջը անոր խոստացայ բնաւ իր խրատը չը մոռնալ, անոր առաջը ծունկի վրայ եկայ, իր ձեռքերը գլխուս վրայ տարածեց և ինծի օրհնեց: Մն առենը ինծի գրկելով համբուրեց, և քանի մը ստակ տուաւ, իր յուզմունքը շատ էր որ մէկ բառ մը չէր կրնար հնչել: Եկեղեցիէն ելանք, ինծի անգամ մըն ալ համբուրեց, և հեկեկալով մը ըսաւ. « մնաս բարով, սիրելի որդիս, անանկ վարուէ որ օր մը քեզի հետ երկինքը տեսնուինք: » Վաղելով քովէս գնաց և եկեղեցիին պատին ետին աներևոյթ եղաւ: Այն աղէտաւոր ժամանակէն ՚ի վեր մէկ մըն ալ անիկայ չը տեսայ: Այս առանձին մատուռը զգալի կերպով այս աղէտալի վայրկեանները միտքս բերին: Մերադդ հօրերնուս ջերմեռանդ աղօթքը նորէն կը յիշէի: Մնիկայ խորանին առաջը ծունկի վրայ եկած կը թուէր ինծի տակաւին: Աստուծոյ աղաչեցի որ ինծի գթայ, և այնչափ տարի սպասելէս ետքը ինծի շնորհէ որ հօրս և քուկին ինչ ըլլալնիդ իմանամ, իմ սիրելի քոյրս: Տէրը աղօթքս լսեց, քեզ դարձեալ կը տեսնեմ, և ուրախութեամբ կիմանամ որ մեր բարի հայրը, իր վերջին վայրկեանները, զիս չէ մոռցեր և ինծի օրհներ է: »

« Լուիզայ լալով ըսաւ , այս խեղճ հայրը այսօր երկինքն է , և իր օրհնութիւնը իր տղոցը վրայ իջած է : Մեր դէպքերը զարմանալի են , իմ սիրելի Քոնրատս , գեղին եկեղեցւոյն խորանին առաջն էր որ հրաժարական ողջոյնը քեզի տուաւ , և առանձին մատուռի մը մէջ է որ , շատ տարիներ հեռու մնալէս ետքը , Աստուած կը շնորհէ որ մենք դարձեալ իրար գտնենք : Այո՛ , Ամենակարողս հօրերնուս քէնէ զատուած ատենին աղօթքը լսեց , քուկինդ ալ այս մատուռը մտած ատենդ լսեց , և անոնք կատարեց : Աստուծոյ շնորհակալ ըլլանք որ հօրերնուս վերջին խրատներուն երկիւղածութեամբ հեռուելով , Տէրը չի մոռցար : Շնորհակալ ըլլանք անոր որ քեզի այս մատուռիս առջևէն անցնել շնորհեց , վասն զի առանց ասոր գուցէ իրար գտնելիք չունէինք : Այս խորանիս առաջը ծունկի վրայ գանք , ով սիրելի Քոնրատ , և բարձրելոյն շնորհակալ ըլլանք որ մեզ հրաշապէս մխաւորեց : »

Քոնրատ և քոյրը ծունկի վրայ եկան խորանին տուսջը և բոլոր սրտանց Աստուծոյ շնորհակալ եղան իրար գտնելնին շնորհած ըլլալուն համար :

« Քոնրատ Լուիզային ըսաւ , իմ սիրելի քոյրըս , ի՞նչպէս կըլլայ որ դուն այս մատուռը եկած կըլլաս , որ անտառին մէջ տեղն

է , և կը համարձակիս մինակ գալու ասանկ  
առանձին տեղ մը : »

« Կը սխալիս , Քննրատ , պատասխանեց  
լուիզա , գրեթէ անտառին ծայրն եմք , և ամեն  
օր շատ մը հաւատացեալ այս մատուռը  
կուգան , այս իմ սիրելի պրտըտելու տեղս է :  
Գարունի և ամառուան մէջ , երբոր ժամանակը  
աղէկ և օրուան աշխատանքներս շուտ լինցած  
ըլան , քանի մը վայրկեան այս մատուռիս մէ-  
ջ անցնելու կուգամ , սովորաբար կիրակի օրե-  
րը կէս օրուրնէ ետքը կուգամ : Հոս առաջ-  
նորդող ճամբան շատ զուարճալի պտըտելու  
տեղ մըն է , ամեն անգամ հոս գալուս քաղա-  
քացիի մը աղջկան կնկերանամ , որ իմ սիրելի  
բարեկամներու մէկն է : Այսօր հետս չը կըր-  
ջաւ գալ : Այս պզտիկ գիրքը , որ իմ սիրած  
աղօթքի գիրքս է , ամենեւին քովէս չը պակ-  
սիր , երբոր հոս կուգամ . թէպէտ այնքան  
կարգացած եմ որ գոց գիտեմ : Շատ անգամ  
հոս գալովքեզ կը մտածէի , սիրելի Քննրատս ,  
եւ Աստուծոյ աղաչեցի որ քեզ իմ սիրոյս շնոր-  
հէ : Կը տեսնես որ իմ աղօթքներս պարապը  
չելան , իմ սիրելի փոքրիկ գիրքս ձգելով ,  
Աստուած քեզի հոն առաջնորդեց որպէս զի  
քեզ հոն գտնամ . այս գրքին կորուստը ինձի  
համար մեծ թշուառութիւն էր , եւ իմ հոգս  
մեծ ուրախութիւն մը եղաւ : »

« Քոնրատ իր քրոջը , իմ կորսուելու ալ  
 Աստուծմով էր , ըսաւ . իմ ճամբաս կորսնցընե-  
 լուս շատ ցաւեցայ , եւ հոս ինծի առաջնորդող  
 ձեռքը օրհնելու կը պարտաւորիմ , ինչու որ ես  
 քեզ հոս գտայ : Տէրը ասանկ կամեցաւ , մեծ  
 հոգի մը մեծ ուրախութիւն մը կը յաջորդէ :  
 Ըսէ ինծի , սիրելի Լուիզաս , դուն ո՞ւր կը  
 բնակիս : »

« Լուիզա սրտասխանեց , հոսկէց քա-  
 ուորդի մը չափ հեռու , Շէօնպոօն գիւղա-  
 քաղաքը , որ փոքրիկ բլուրի մը վրայ կառու-  
 ցած է , ինծի իր քովը առնել ուզող մարդասէր  
 տիկինը հոն կը բնակի : Ասիկայ առանց ար-  
 զու որբեայրի մըն է , իր ամուսինը հա-  
 րուստ վաճառական մըն էր , ինծի շատ կը  
 սիրէ , այնքան բարեբարութիւնով ինծի կը  
 դարմանէ որպէս թէ իր տղան ըլլամ : Բայց  
 օրը իրիկուն կըլլայ , տուն երթանք : Գըլ-  
 խարկդ եւ գաւազանդ առ , քու պարկդ ալ  
 ես կը տանիմ , վասն զի ճամբէն հոգնած  
 կը նմանիս : Աստահ եմ որ իմ բարեբարս քեզ  
 հաճութեամբ կը տեսնէ : »

Երկուքն ալ շուտ մը ճամբայ ելան ,  
 Քոնրատ ամենեւին քրոջը իր պարկը տանելուն  
 չի հաճեցաւ : Ճամբան իրենց երկան չերեւ-  
 ցաւ . իրարու հետ խօսելու շատ խօսքեր ու-  
 նէին , երբ Լուիզային մօր տեղ բռնող բարի

որբեւայրիին տունը հասան , այս կինը հաւատալ չուզեց այս երիտասարդ մարդը իր որդեգրին եղբայրը ըլլալուն : Շատ մը հետաքրքիր մարդիկ անիկայ տեսնելու կուգային : « Ոմանք , անոր Նուիզային եղբայրը ըլլալը հարցընել պէտք է , կըսէին . երկու կաթիլ ջուրի պէս երկուքը իրար կը նմանին : » Ուրիշները լռութեամբ գլուխնին երէրցընելով հանձարեղ ճշնով մը « նաչէ դուն որի կը վատահիս » , կըսէին :

Բոլոր երկբայութիւնները դադրեցընելու համար , Քոնրատ ի՛ր պարկը բացաւ , և իր ըզգեստը , իր ճամբու ստակը և իր գեղի ժողովրդապետէն վկայական գիր մը ցուցուց մօտականերուն : Այն ատեն մէկն ալ իր խօսքերուն ճըշմարտութեանը չը կասկածեցաւ , և երբ բարի որբեւայրին իրար գտնելնուն կերպը հասկցաւ , աչքէն արցունք եկաւ :

« Քոնրատին ըսաւ , իմ ունեցածս Նուիզային կիսայ , և ամենևին քովէս պիտի չի զատուի , թէ որ բարի և առաքինի ըլլալը շարունակէ , և թէ որ իր տարիքին օրիորդներուն պէս խենդ չըլլայ որ զարդարանքէն ուրիշ բան չեն մտածեր և հաճոյքներնուն ետեւէն կը վազեն : Բայց դուն , բարի Քոնրատ , դուն առանց օգնութեան չես մնար : Աստուած ինձի քիչ մը հարստութիւն շնորհեց , իմ ինչքս իմ նմոններուն երջանկութիւն պատճառելէն զատ :



աւելի աղէկ բանի չեմ կրնար գործածել :  
 Հոս պղ ճագործ մը կար , վեց ամիս է մեռեր  
 է , և տունը ծախու է : Թէ որ քու արհեստդ  
 բանելու աղէկ վարժուած ըլլալդ ցուցունես նե  
 այն տունը քեզի կառնեմ :

Այս պատուական խաթունը ասանկ խօսե-  
 լով իր սրտին բարութիւնը յայտնեց : Ի՞ր ազգա-  
 կաններէն մէկ քանին , հարուստ մարդիկ , մու-  
 բացող աղ քատներէն աւելի արծաթասէր , անոր  
 միտքը դարձնել կուզէին : Բայց ան իր խօսքը բըռ-  
 նելու բաւական հաստատուն կեցաւ : Քոնրատ այն  
 տեղի ամենէն յարգի և գովելի սանուտերուն մէ-  
 կը եղաւ : Լուիզա ալ իր բաժինը գտաւ և շատ  
 երջանիկ եղաւ :

Քաջ Քոնրատը իրեն արուեստ սորվեցնող  
 վարպետը չը մոռցաւ . ոչ թէ միայն ժամանակ ժա-  
 մանակ գիր կը գրէր ինքը զինք յիշեցնելու համար ,  
 այլ շատ ազնուական կերպով մը իր շորհակալութիւ-  
 նը ցուցուց : Երբ իր վարպետը ծերացաւ , որով-  
 հետև ամենեւին չէր կրնար աշխատիլ , իր կինը մե-  
 ռած էր և ինքը պատերազմներուն երեսէն գրեթէ  
 բոլորովին վրած էր , Քոնրատ անիկայ իր տունը բե-  
 րել տուաւ : Տեղը ձգելու հաճեցնելու համար ,  
 ինք անոր ետևէն գնաց , իր հետը բերաւ , և ա-  
 նիկայ իր հայրը եղածի պէս միշտ շատ յարգութեամբ  
 վարուեցաւ : Լուիզա իր մայրագրին ալ անանկ կը-  
 ներ : Երկու ծերերն ալ միշտ կըսէին . « Աստ-

ուած մեզի տղայ չի տուաւ , բայց մեր ընդու-  
նածներն ալ մեր յատուկ տղոցը չափ մեզի ուրա-  
խութեան պատճառ կը լլան : »

Եղբայր և քոյր իւենց ծախքովը անտառի հին  
մատուռը նորոգել տուին , և Քոնրատ եկեղեցին  
չինուած բլուրին վրայ չորս թմբի առոյգ ծառեր  
անկել տուաւ : Ժամանակով սեցած խորանին հին  
պատկերը , որ ճարտար պատկերհան մը՝ վարպետի  
գործ ըլլալը ցուցուց , նորոգուեցաւ : Մատուռը  
մտնողները , ախորժանօք անկիայ ասանկ գեղեցիկ  
վիճակի մէջ տեսնելով կը զարմանային : Ներսէն  
ճերմակ ներկեր էին , և երկինքի լոյսը , որ հոն  
թմբիներուն թանձր տերեւներուն մէջէն կը թափան-  
ցեր , հոն մտածութեան և աղօթքի հրաւիրող  
քաղցր լոյս մը կը ծաւալէր , խորանը ճերմակ մար-  
մորով ծածկուած էր և ախորժակով զարդարուած ,  
բայց այս մատուռիս անշուշտ աւելի աղէկ զարդա-  
րանքը Սուրբ գերբաստանը ներկայացընող պատկերն  
էր : Սուրբ կոյսը իւ հիւղին գուռը նստած էր , ու-  
րուն վրայ որթի տերեւախիտ ոտտ մը ծաւալելով ծած-  
կած էր , անկիայ Յիսուս որդին իր ծնկերուն վրայ  
կը բռնէր : Յովսէփ երկնաւոր տղուն խաղողով լե-  
ցուն սակառ մը կընծայէր : Երկուքն ալ գորո-  
վանօք Յիսուսի կը նայէին , և Յիսուս ալ ազդո-  
բարեպաշտութեան պատկերի սէս աչքերը երկին  
վերցուցած էր : Մէկ կողմը , կնկան բանածներու  
ծածկուած սեղան մը կար , և մէկալ կողմը

տաղձագործի գործիքներ : Այս պատկերին տակը  
 ոսկի գրով հետևեալ ոտանաւորը գրուած էր .

Վարձ բարեպաշտութեան՝

Քաղցրիկ երգանկուքին՝

Երգանիկ օրեր կան

Աշխատասէր մարդուն :



1860

